# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> դեկտեմբերի 2025թ. N ՄՊ/1085-Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՎՃԱՐ՝ <<13-ՐԴ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ>> ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, 22-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի N 02/09.1/42447-2023 հանձնարարականը.

**ո ր ո շ ու մ  ե մ**

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված խնայված միջոցների հաշվին 2025 թվականի տարեկան արդյունքներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հայեցողական պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներին վճարել հավելյալ վճար՝ 13-րդ աշխատավարձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Հավելված**
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025թ. դեկտեմբերի 26-ի ՆՄՌ /1085-Ա որոշման

***ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի աշխատողների 2024թ. 13-րդ աշխատավարձ***

| հ/հ | Ազգանուն | Անուն | Պաշտոն | Ընդ. հաշվարկված |
|---|---|---|---|---|
| | 2 | | 3 | |
| 1 | Եղիազարյան | Արբակ | մարզպետի խորհրդական | 237,120 |
| 2 | Առաքելյան | Ռազմիկ | մարզպետի օգնական | 224,640 |
| 3 | Շառոյան | Թամարա | մարզպետի օգնական | 224,640 |
| 4 | Մարգարյան | Սիրանուշ | մարզպետի տեղակալի օգնական | 149,760 |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**